



Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Օրերի հետ

Ծնունդների խրախուսման նոր համակարգ Հայաստանում

Հայաստանի Հանրապետություն, ի թիվս աշխարհի բազմաթիվ երկրների, գտնվում է ժողովրդագրական երկրորդ անցման փուլում, որը, հանդիսանալով պատմական գործընթաց, բնութագրվում է նաև ավանդական վերարտադրողական վարքի փոփոխությամբ, երբ «բարձր ծնելիություն բարձր մահացություն» մոդելը փոխակերպվում է «ցածր ծնելիություն ցածր մահացություն» մոդելով: Մեր երկրի դեպքում բնակչության վերարտադրողական վերազգծի վրա ազդեցություն ունեցան նաև սոցիալ – քաղաքական հայտնի իրադարձությունները և դրանցով պայմանավորված զանգվածային միգրացիոն հոսքերը: Վերոնշյալ գործոնների ազդեցությամբ ծնելիության և մահացության ցուցանիշների միջև ձևավորվեց նոր հարաբերակցություն:

Ժողովրդագրական ներկա անցումը բերեց նրան, որ առաջիկա տասնամյակների ընթացքում հնարավոր չէ վերադառնալ բնակչության տարիքային այն կառուցվածքին և ծնունդների այն թվաքանակին, որը հանրապետությունում առկա են եղել 1980-ականներին: Սակայն մեղմել դրանց ազդեցությունը, բավարար նախադրյալներ ստեղծելով ժողովրդագրական հետագա զարգացման համար, հնարավոր է և անհրաժեշտ:

Հաշվի առնելով ծնունդների խրախուսման նոր մոտեցումների անհրաժեշտությունը՝ կարևորվում է եապես նոր ծրագրերի ներդրումը, ծրագրեր, որոնք կարող են հանդիսանալ զարգացման երկարաժամկետ գրավական և երաշխիք:

2014 թվականի հունվարի 1-ից, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 39 արձանագրային որոշման, Հայաստանի Հանրապետությունում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար կներդրվի պետական աջակցության նոր ծրագիր: Նախ, երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը 430 հազ. դրամից կաճի՝ հասնելով 500 հազ. դրամի:

Բացի դրանից երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքը կստանա պետական աջակցության իրավունք:

Երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական աջակցությունը երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ են՝ ընտանեկան դրամագլխի ձևով:

Ընտանեկան դրամագլուխը՝ պետական աջակցության շրջանակներում, երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ են, որոնք փոխանցվելու են պետական աջակցության հաշվին փոխանցվող ֆինանսական միջոցների, ինչպես նաև դրանց վրա հաշվարկված և չպահանջված տոկոսների շնորհիվ: 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանեկան դրամագլխի չափը կկազմի 500 հազ. դրամ, հինգերորդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն դրամ:

Ընտանեկան դրամագլխի օգտագործման ուղղությունները հետևյալն են.

ա) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի (կամ այդ ընտանիքի անդամի) համար նոր բնակարանի գնման, կառուցման համար կամ բնակարանի ձեռք բերման նպատակով տրամադրված և հիպոթեքով ապահովված վարկի տոկոսադրույքների և մայր գումարի մարման,

բ) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ ուսումնական (ուսումնադաստիարակչական) հաստատություններում ուսումնառելու ընթացքում ուսման վարձավճարի վճարման,

գ) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ բժշկական օգնության դիմաց վճարման և (կամ) առողջության ապահովագրության դասով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների ապահովագրության նպատակով ապահովագրավճարի վճարման:

Նշված ուղղություններից օգտվելու առաջնահերթությունը որոշվելու է պետական աջակցության տնօրինողի կողմից:

Ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվելու են տոկոսներ, որոնք պետական աջակցության տնօրինողի կողմից կարող է օգտագործվել կանխիկ կերպով: Ընտանեկան դրամագլխին իր ողջ ծավալով, ներառյալ դրան հաշվեգրված և չպահանջված տոկոսներով, կանխիկ կերպով կարող է օգտագործվել միայն այն երեխայի չափափաս դառնալուց հետո, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, առանց սահմանափակումների:



Ըստ ելույթյան, առաջարկվում է ծնունդների խրախուսման որակապես նոր համակարգ, երբ, ընտանիքում ծնված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնունդով պայմանավորված, պետական աջակցությունը հնարավորություն է տալիս ոչ միայն հոգալ ընտանիքի առաջնահերթ կարիքների մի մասը, այլև ժամանակի ընթացքում՝ ծնողների շրջանում էլ ավելի ամրապնդել իրենց երեխայի ապագայի նկատմամբ վստահությունը:

Արդա Ազնավուրյան

ЖИЗНЬ ОБЩИНЫ

Наши в Президентской академии!



20 февраля в Российской академии народного хозяйства и государственной службы при Президенте РФ прошла выставка национальной кухни народов, проживающих в Ростовской области, организованная студенческим советом при участии молодежных этнокультурных организаций. Активисты Донского союза армянской молодежи, участвующие в данном учебном заведении, приняли самое деятельное участие в этом мероприятии. Особую активность проявили студентки Елена Назаретян, Арпине Саркисян и Елена Маргарян. Девчата развернули большой гостеприимный стол из блюд национальной кухни в фойе актового зала. Посмотреть и вкюснуть кулинарные изыски пришли учащиеся и руководство академии. По итогам конкурса наши студентки были отмечены благодарственными письмами.

Большой шквал аплодисментов сорвали наши танцоры, которые продемонстрировали два незабываемых танца в концертной программе. Великолепными вокальными данными отличилась наша студентка Анюта Петросова.

Отмечу, подобные мероприятия стали традиционными для ЮРИУ РАНХиГС при Президенте РФ, где каждый народ имеет возможность продемонстрировать лучшие образцы своей культуры.

Елена Назаретян, студентка ЮРИУ РАНХиГС при Президенте РФ, руководитель информационного направления

Встреча РРМОО «Донской союз армянской молодежи» с преподавательским составом Южно-Российского института управления РАНХиГС



14 февраля прошла встреча руководства Ростовской региональной молодежной общественной организации «Донской союз армянской молодежи» (РРМОО «ДСАМ») с представителями армянской молодежи и с профессорско-преподавательским составом Южно-Российского института управления РАНХиГС при Президенте РФ. Диалог завязался очень живым и эмоциональным. На обсуждение выносились целый ряд проблем и вызовов, стоящих сегодня перед армянской молодежью России и в частности Ростова и Ростовской области. Среди них отмечу наиболее острые,

которые непосредственно связаны с цементирующими факторами сохранения армянства, а именно низким уровнем знания среди молодежи армянского языка, истории, основ ААЦ. Также важной проблемой собравшиеся обозначили размывание национальных традиций и обычаев, что может привести к потере национальной идентичности и как следствие к ассимиляции с другими народами и ряд других первоочередных проблем. На встрече также обсудили вопросы, касающиеся изучения армянского языка, истории, культуры, танцев.

Была проведена презентация РРМОО «ДСАМ» и ее приоритетных проектов и направлений деятельности. В заключение прозвучали многочисленные идеи и предложения по решению указанных проблем. По итогам встречи были избраны активисты из числа студентов и аспирантов, которые взяли на себя ответственность за работу в конкретных направлениях по указанным проблемам. В ближайшее время подобные встречи пройдут во всех ведущих вузах города и области.

Б.А. Асатрян, председатель правления РРМОО «ДСАМ»